



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

N 38 - Ա
11 սեպտեմբերի 2012 թ.

Գ Ե Ն Դ Ե Ր Ա Յ Ի Ն Հ Ա Ր Ց Ե Ր Ո Վ Զ Բ Ա Ղ Վ Ո Ղ Մ Շ Տ Ա Կ Ա Ն
Հ Ա Ն Ձ Ն Ա ժ Ո Ղ Ո Վ Ս Տ Ե Ղ Շ Ե Լ Ո Ւ Ե Վ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ի 2011 Թ Վ Ա Կ Ա Ն Ի Հ Ո Ւ Ն Ի Ս Ի 17-Ի N 52
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ո Ի Ժ Ը Կ Ո Ր Ց Ր Ա Ծ Ճ Ա Ն Ա Չ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով „Իրավական ակտերի մասին“ Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի „բ“ ենթակետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հուլիսի 19-ի N 140-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կանոնադրության 1-ին գլխի համաձայն ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

- | | |
|----------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Հակոբյան Ա. | - մարզպետի տեղակալ, նախագահ |
| Գալոյան Մ. | - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ |
| Մնացականյան Վ. | - մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ |
| Շահբազյան Հ. | - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ |
| Սաֆարյան Հ. | - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ |
| Այվազյան Մ. | - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ |
| Խաչատրյան Ս. | - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ |

- Հովհաննիսյան Ն. - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, քարտուղար
- Չատիկյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ
- Կարապետյան Տ. - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ
- Խլղաթյան Խ. - "Գեղամա աշխարհ" մարզային թերթի գլխավոր խմբագիր
- Գևորգյան Ա. - "Մարտունու կանանց համայնքային խորհուրդ" Հ/Կ
- Մոմջյան Կ. - "Կանանց իրավունքների կենտրոն" Հ/Կ

2.Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2012 թվականի միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքի մասին պարբերաբար զեկուցել մարզպետին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի հունիսի 17-ի ,,Գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող հանձնաժողով ստեղծելու մասին՝ N 52-Ա կարգադրությունը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

N. . Պապուկյան

Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 42 - Ա
17 դեկտեմբերի 2013 թ.


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11 - Ի N 38 - Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «հրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերի և Հայաստանի
Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի
1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի
սեպտեմբերի 11-ի «Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով
ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011
թվականի հունիսի 17 -ի N 52-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու
մասին» N 38-Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
կարգադրության 1-ին կետում տեքստից հանել «Չատիկյան Գ. -
մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների
իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ» բառերը:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝


Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ